ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«Սիթի օֆ Սմայլ» հիմնադրամի

(ՀՀ, ք. Երևան)

ԵՎ

Սբ. Հուդայի մանկական հետազոտական հիվանդանոցի

(ԱՄՆ, Թենեսի, ք. Մեմֆիս)

ՄԻՋԵՎ

Սույն փոխըմբռնման հուշագիրը (հետայսու՝ Հուշագիր) կազմվել է 2019 թ. ապրիլի 12-ին:

«Սիթի օֆ Սմայլ» հիմնադրամը («Սիթի օֆ Սմայլ/Ժպիտների քաղաք») անկախ, գրանցված, շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որն ստեղծվել է ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդություններ ունեցող երեխաներին աջակցելու համար և գործում է Երևանում (Հայաստան) կիրառելի տեղական ու համապետական օրենքներին համապատասխան: Հիմնադրամի առաքելությունն է քաղցկեղի հաղթահարման դժվարին ճանապարհին օգնել վերը նշված հիվանդներին և նրանց ընտանիքներին: Այն ձգտում է խթանել ուռուցքաբանության և արյունաբանության զարգացումը, աջակցել բժիշկներին և բուժհաստատություններին՝ իրենց պացիենտների համար քաղցկեղի խնամքի ամենաբարձր մակարդակ ապահովելու համար:

Սբ. Հուդայի մանկական հետազոտական հիվանդանոցը («Սբ. Հուդա») շահույթ չհետապնդող, հարկերից ազատված կորպորացիա է Ամերիկայի Միացյալ Նահանգների Թենեսի նահանգում, որի գրանցման հասցեն է 262 Danny Thomas Place, Memphis TN USA 38105:

«Սիթի օֆ Սմայլ/ Ժպիտների քաղաք»-ը և «Սբ. Հուդա»-ն հետայսու համատեղ կանվանվեն «Կողմեր»:

Ա. ՆՊԱՏԱԿԸ

Կողմերն այս Հուշագրում ցանկանում են արձանագրել իրենց շարունակական համագործակցության հիմքը՝ որոշարկելու Հայաստանում ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բուժման միջոցների առաջխաղացման գործում յուրաքանչյուր Կողմի ներդրումը և կազմելու իրականացման պլան՝ «Սիթի օֆ Սմայլ/ Ժպիտների քաղաք»-ի և «Սբ. Հուդա»-ի կիրառելի քաղաքականությանը, կանոններին և կարգավորումներին լիարժեքորեն համապատասխան:

Երևանում (Հայաստան) քաղցկեղով հիվանդ երեխաների և դեռահասների հետազոտման օպտիմալացման և բուժման առաջխաղացման նպատակով «Սիթի օֆ Սմայլ»-ը և «Սբ. Հուդա»-ն կհամագործակցեն հետևյալ ոլորտներում.

1. Հաստատել միջինստիտուցիոնալ գործընկերային փոխհարաբերություն, որի արդյունքում կմշակվեն քայլեր՝ ուղղված փոխհամաձայնեցված շահույթ չհետապնդող նպատակների առաջխաղացմանը, ինչը կնպաստի Հայաստանում քաղցկեղով հիվանդ երեխաների համակողմանի խնամքի և բուժման բարելավմանը:
2. «Սիթի օֆ Սմայլ/ Ժպիտների քաղաք»-ը համաձայնում է մասնակցել «Սբ. Հուդայի գլոբալ մանկաբուժության» (Global Pediatric Medicine) հետ առցանց կամ անմիջական հանդիպումներին և «Սբ. Հուդա»-ին տեղեկացնել տարածաշրջանում մանկական քաղցկեղի ծրագրերի հետ կապված տարածաշրջանային զարգացումների մասին:

Բ. ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ

Սույն Հուշագրում ուրվագծված նոր գործընկերությամբ Կողմերը ցանկանում են հետայսու համատեղել ջանքերը Հայաստանում երեխաների քաղցկեղի բուժման բարելավման ուղղությամբ:

Գ. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կողմերը կարող են համատեղ աշխատել՝ մանկական ուռուցքաբանության առաջխաղացման հարցում Հայաստանի հիվանդանոցներին ու բուհերին օգնելու և հիվանդներին ու նրանց ընտանիքներին աջակցելու համար գործընկերությունների խթանման նպատակով:

Դ. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄ

Սույն Հուշագիրը կարող է փոփոխվել կամ վաղաժամկետ լուծվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ՝ առնվազն վեց ամսվա նախնական ծանուցումով: Այս Հուշագրին վերաբերող ցանկացած ծանուցում կամ հաղորդակցություն կատարվում է գրավոր ու անգլերենով և համարվում է պատշաճ կերպով տրված կամ կատարված, երբ նախատեսված հասցեատիրոջը/հասցեատերերին փոխանցվում է առձեռն, ուղարկվում պատվիրված փոստային առաքման, սուրհանդակի կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

Ե. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ

1. Սույն Հուշագիրը չի ներառում Կողմերի միջև միջոցների փոխհատուցում կամ փոխանակում: Ֆինանսավորմանը (և ոչ միայն) վերաբերող պայմանները, կհաստատվեն հաջորդող համաձայնագրերում, որոնք կստորագրեն Կողմերը:
2. Կողմերից յուրաքանչյուրը համաձայն է, որ այն որևէ նպատակով անհատապես կամ համատեղ չի օգտագործելու մյուս Կողմի անունը, նկարը, լոգոն կամ ապրանքային նշանը՝ առանց այդ Կողմի՝ նախապես տրված գրավոր համաձայնության:

3. Կողմերը միմյանցից անկախ են. նրանք համատեղ գործունեություն իրականացնող, համատեղ ձեռնարկություն կամ միմյանց համատեղ գործատուներ չեն հանդիսանում: Կողմերից ոչ մեկը մյուսին պարտավորեցնելու լիազորություն չունի:
4. Յուրաքանչյուր Կողմ առաջնորդվում է իր երկրում գործող օրենքներով, ներառյալ, բայց ոչ միայն, այն օրենքները, որոնք վերաբերում են տվյալների գաղտնիությանը/պաշտպանությանը, կաշառակերության/կաշառատվության և կոռուպցիայի, ահաբեկչության արգելմանը և արտահանման վերահսկողությանը:

Զ. ՀՐԱԺԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Սույն Հուշագրի հիմնական նպատակն է արտացոլել Կողմերի ներկայիս մտադրությունները: Այս Հուշագիրը լայնորեն սահմանում է գործընկերային փոխըմբռնումն ու Կողմերի միջև նախատեսված համագործակցության ընդգրկումը և միտված չէ իրավական կապերի ստեղծմանը: Այն նախատեսված չէ լինել իրավաբանորեն պարտադիր պայմանագիր, Կողմերից որևէ մեկի համար չի ստեղծում և չի պարտադրում իրավական իրավունքներ, պարտականություններ կամ պարտավորություններ: Եթե Կողմերը մտադիր լինեն ձևավորել իրավաբանորեն պարտավորեցնող պայմանագրային փոխհարաբերություններ, նրանք պետք է ստորագրեն առանձին գրավոր համաձայնագիր, որը հատուկ նախատեսված կլինի նման մտադրության համար:

Է. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

Սույն Հուշագրի շրջանակներում խորհրդատվությունը և տեղեկությունների ու փաստաթղթերի փոխանակումը պետք է համարվի գաղտնի, եթե Կողմերի միջև այլ գրավոր պայմանավորվածություններ չեն հաստատվում:

Ը. ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Սույն Հուշագրի մեկնաբանության կամ դրա լրամշակման, դադարեցման կամ իրագործման հարցերին վերաբերող բոլոր տարաձայնությունները Կողմերը կձգտեն կարգավորել բանակցությունների միջոցով՝ հիմնվելով բարեխիղճ համագործակցության և փոխվստահության սկզբունքների վրա:

Թ. ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից լիազորված պաշտոնատար անձանց ստորագրությունների հիման վրա:

Այսպիսով, «Սիթի օֆ Սմայլ/ Ժպիտների քաղաք» հիմնադրամի (ՀՀ, ք. Երևան) և Սբ. Հուդայի մանկական հետազոտական հիվանդանոցի (ԱՄՆ, Թենեսի, ք. Մեմֆիս) միջև Փոխըմբռնման հուշագիրն ընդունվում է Կողմերի կողմից 2019 թվականի ապրիլի 12-ին:

«Սիթի օֆ Սմայլ/Ժպիտների քաղաք» հիմնադրամ
(ստորագրություն)
Աննա Հակոբյան
Պաշտոն՝ Հոգաբարձուների խորհրդի նախագահ
Ամսաթիվ՝ 04/12/2019

Սբ. Հուդայի մանկական հետազոտական հիվանդանոց
(ստորագրություն)
Կառլոս Ռոդրիգեզ-Գալինդո
Պաշտոն՝ Գործադիր Տնօրենի Տեղակալ և «Global Pediatric Medicine»-ի Նախագահ
Ամսաթիվ 04/12/2019

Երաշխավորող՝

(ստորագրություն)

Սիմա Ջեհա

Ծրագրի ղեկավար, Արևելամիջերկրածովյան տարածաշրջան

Ամսաթիվ 04/12/2019